ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/2024

2024 թվականի հունիսի 28-ին հրավիրված արտահերթ նիստի: Նիստին մասնակցում էին հանձնաժողովի հինգ անդամ /նիստի ընթացքը ձայնագրվել է/:

Հանձնաժողովի նիստի վայրը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3

Հանձնաժողովի նիստի սկիզբը՝ 2024 թվականի հունիսի 28-ին, ժամը 09:30

Հանձնաժողովի նիստին ներկա էին

Հանձնաժողովի նախագահ՝

1. Արաքսիա Սվաջյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

2. Թամարա Սարգսյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետ /հանձնաժողովի անդամ գնահատող/

3. Ստալ Սարդարյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/

4. Թամարա Գյոզալյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/

5.Կարինե Բաբայան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությա հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի անդամ, բացող/

Հանձնաժողովի
քարտուղար՝

6. Ռուզան Սաֆարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության փորձագետ

Հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի անդամ Թամարա Գյոզալյանը նիստին մասնակցում էին առցանց:

Հանձնաժողովի նիստին բացակայում էր Ռուզան Սաֆարյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.

Հարց 1.«ՀՀ ԿԳՄՍՆԴՄ-0001146», «ՀՀ ԿԳՄՍՆԴՄ-00001146», «ՀՀ ԿԳՄՍՆԴՄ-000001146» ,«ՀՀԿԳՄՍՆԴՄ-0000001146», «ՀՀԿԳՄԱՆ ԴՄ- 00000001146 » ծածկագրերով հայտարարված դրամաշնորհային մրցույթների արդյունքների ամփոփում:

Հարց 2. Սահմանված անցողիկ շեմը հաղթահարած և հաղթող ճանաչված դասագրքեր ստեղծող կազմակերպությունների /անձանց/ հետ պայմանագրեր կնքելու հարցի քննարկում:

Հարց 3. Լրամշակված դասագրքերի գործածության երաշխավորելու հարցի քննարկում և նախարարի հաստատմանը ներկայացում:

1. Հանձնաժողովի անդամ Կարինե Բաբայանը հակիրճ ներկայացրեց նիստի օրակարգում ընդգրկված հարցերը՝ նշելով հարցերի քննարկման անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով փորձագիտական հանձնաժողովների կողմից սահմանված կարգով, գնահատման սանդղակի համաձայն ներկայացված գրավոր եզրակացությունները՝ ներկայացվեց ամփոփ տեղեկատվություն 5-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների դասագրքերի փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Հիմք ընդունելով փորձագիտական հանձնաժողովների կողմից սահմանված կարգով, գնահատման սանդղակի համաձայն ներկայացված գրավոր եզրակացությունները, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի ս/թ հունիսի 10-ի որոշումը՝ /Արձանագրություն N 7/2024/ ներկայացվեց ամփոփ տեղեկատվություն 5-րդ, 7-րդ, 8-րդ և 10 րդ դասարանների դասագրքերի փորձաքննության արդյունքների վերաբերյալ: **Մասնավորապես՝**

<u>5-րդ դասարան</u>

5-րդ դասարանի 4 անուն դասագրքերի համար ներկայացվել էր 7 օրինակ դասագիրք:

«Իմ հայրենիք 5» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝ « Էդիթ Պրինտ» ՍՊԸ , «Զանգակ-97» ՍՊԸ և մեկ ֆիզիկական անձ՝ Արա Աթայանը: Նշված դասագրքերի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական

առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագրքերը ուղարկվել էին կրկնակի փորձաքննության: Կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա «Զանգակ-97» ՍՊԸ-ի և Արա Աթայանի ներկայացրած դասագրքերը հաղթահարել են դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, իսկ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դասագիրքը՝ ոչ: Նախարարություն է ներկայացվել «Զանգակ-97» ՍՊԸ-ի և Արա Աթայանի «Իմ հայրենիքը 5» առարկայի դասագրքերի լրամշակված տարբերակները:

«Ռուսաց լեզու 5» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Մանմար հրատարակչություն» ՓԲԸ-ն: Ներկայացված դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, որը սահմանված կարգով ուղարկվել է լրամշակման: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքի լրամշակված տարբերակը:

<u>6-րդ դասարան</u>

6-րդ դասարանի 12 անուն դասագրքերի համար ներկայացվել էր 25 օրինակ դասագիրք:

«Ֆրանսերեն 6» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Զանգակ 97» ՍՊԸ-ն, որի դասագիրքը չի հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը:

«Ռուսաց լեզու 6» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Մանմար հրատարակչություն» ՓԲԸ-ն: Ներկայացված դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, որը սահմանված կարգով ուղարկվել է լրամշակման: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքի լրամշակված տարբերակը:

«Մաթեմատիկա 6» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել 3 կազմակերպություն՝ «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ն, «Զանգակ-97» ՍՊԸ-ն և «Քառակուսի» կրթական հիմնադրամը:Ներկայացված բոլոր դասագրքերը հաղթահարել են դասագրքի գնահատման համար սահմանված շեմը, սակայն համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով հայտարարված Դրամաշնորհի հատկացման մրցույթի հրավերի պահանջների՝ բարձր միավորներ են ստացել «Զանգակ-97» ՍՊԸ-ն և «Քառակուսի» կրթական հիմնադրամի կողմից ներկայացված դասագրքերը: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքերի լրամշակված տարբերակները:

«Իմ հայրենիքը և աշխարհը 6», «Մայրենի 6» առարկաների դասագրքերը գտնվում են փորձաքննության փուլում, որոնց անդրադարձ կլինի փորձաքննության արդյունքները ստանալուց հետո և կներկայացվի նախարարի հաստատմանը:

<u>7-րդ դասարան</u>

7-րդ դասարանի 6 անուն դասագրքերի համար ներկայացվել էր 5 օրինակ դասագիրք:

«Ռուսաց լեզու 7» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Մանմար հրատարակչություն» ՓԲԸ-ն: Ներկայացված դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, որը սահմանված կարգով ուղարկվել է լրամշակման: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքի լրամշակված տարբերակը:

«ԹԳՀԳ 7» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Մանմար հրատարակչություն» ՓԲԸ-ն, որի դասագիրքը չի հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը:

8-րդ դասարան

8-րդ դասարանի 20 անուն դասագրքերի համար ներկայացվել էր 40 օրինակ դասագիրք:
«Համաշխարհային պատմություն 8» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել 2 կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն և «Զանգակ-97» ՍՊԸ-ն: Նշված դասագրքերի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագրքերը ուղարկվել էին կրկնակի փորձաքննության: Կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա «Զանգակ-97» ՍՊԸ-ի ներկայացրած դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, իսկ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դասագիրքը՝ ոչ: Նախարարություն է ներկայացվել «Զանգակ-97» ՍՊԸ-ի ներկայացրած դասագրքի լրամշակված տարբերակը:
«Հասարակագիտություն 8» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել երեք կազմակերպություն՝ «Զանգակ-97» ՍՊԸ-ն, «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ն և «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամը: Նշված դասագրքերի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագրքերը ուղարկվել էին կրկնակի փորձաքննության: Կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա ներկայացված բոլոր դասագրքերը հաղթահարել են դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, սակայն համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով հայտարարված Դրամաշնորհի հատկացման մրցույթի հրավերի պահանջների՝ բարձր միավորներ են ստացել «Զանգակ-97» ՍՊԸ-ի և «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի կողմից ներկայացված դասագրքերը: «Զանգակ-97» ՍՊԸ-ի և «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի կողմից ներկայացված դասագրքերը սահմանված կարգով ուղարկվել են լրամշակման: Նախարարություն են ներկայացվել վերոնշյալ դասագրքերի լրամշակված տարբերակները:
«Հայոց պատմություն 8» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամը: Նշված դասագրքի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների

ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագիրքը ուղարկվել էր կրկնակի փորձաքննության: Կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա դասագիրքը չի հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը:

«ԹԳՀԳ 8» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Մանմար հրատարակչություն» ՓԲԸ-ն, որի դասագիրքը չի հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը:

«Նախնական զինվորական պատրաստություն 8» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ն: Նշված դասագրքի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագիրքը ուղարկվել էր կրկնակի փորձաքննության: Կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, որը սահմանված կարգով ուղարկվել է լրամշակման: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքի լրամշակված տարբերակը:

«Աշխարհագրություն 8» ,**«Հանրահաշիվ 8»** առարկաների դասագրքերը գտնվում են փորձաքննության փուլում, որոնց անդրադարձ կլինի փորձաքննության արդյունքները ստանալուց հետո և կներկայացվի նախարարի հաստատմանը:

<u>10-րդ դասարան</u>

10-րդ դասարանի 11 անուն դասագրքերի համար ներկայացվել էր 8 օրինակ դասագիրք:

«Նախնական զինվորական պատրաստություն 10» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ն: Նշված դասագրքի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագիրքը ուղարկվել էր կրկնակի փորձաքննության: Կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, որը սահմանված կարգով ուղարկվել է լրամշակման: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքի լրամշակված տարբերակը:

«Համաշխարհային պատմություն 10» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն և «Զանգակ-97» ՍՊԸ-ն: Նշված երկու դասագրքերի փորձաքննությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022թ. հունիսի 9-ի N 20-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգին» և «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման սանդղակին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով դասագրքերը ուղարկվել էին կրկնակի փորձաքննության: Նշված երկու դասագրքերի կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա «Զանգակ-97» ՍՊԸ-ի դասագիրքը հաղթահարել է դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը, իսկ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դասագիրքը՝ ոչ: «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դասագիրքը սահմանված կարգով ուղարկվել է լրամշակման: Նախարարություն է ներկայացվել վերոնշյալ դասագրքի լրամշակված տարբերակը:

Մրցութային հանձնաժողովը որոշեց՝

1.Ընդունել դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը հաղթահարած, սահմանված կարգով հեղինակի կողմից լրամշակված դասագրքերը:

2.Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ արտահայտվեցին հանձնաժողովի անդամները: Ներկայացվեցին այն կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, որոնց դասագրքերը հաղթահարել են դասագրքի գնահատման համար սահմանված անցողիկ շեմը և հաղթող ճանաչվել: Քննարկվեցին նաև կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշվային արժեքները և նրանց հետ պայմանագիր կնքելու հարցը:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 31-րդ կետի պահանջների՝ հանձնաժողովը ձայների 5 (հինգ) կողմ 0 (զրո) դեմ հարաբերակցությամբ
որոշեց՝
նախարարի հաստատմանը ներկայացնել այն կազմակերպությունների /անձանց/վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հետ կարող են կնքվել «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ,6-րդ,7-ր,8-րդ և 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագրեր.

1.1 կարող են կնքվել հետևյալ կազմակերպությունների /անձանց/ հետ.

Դասագիրքը	**Կազմակերպությունը**	**Գնառաջարկը /հազ.դրամ/**
5-րդ դասարան		
Իմ հայրենիքը 5	«Զանգակ-97» ՍՊԸ	6,300,000
Իմ հայրենիքը 5	Արա Աթայան	6,300,000
Ռուսաց լեզու 5	«Մանմար հրատարակչություն» ՓԲԸ	6,300,000

6-րդ դասարան		
Ռուսաց լեզու 6	«Մանմար հրատարակչություն» ՓԲԸ	6,300,000
Մաթեմատիկա 6	«Քառակուսի» կրթական հիմնադրամ	6,200,000
Մաթեմատիկա 6	«Զանգակ-97» ՍՊԸ	6,300,000
7-րդ դասարան		
Ռուսաց լեզու 7	«Մանմար հրատարակչություն» ՓԲԸ	6,300,000
8-րդ դասարան		
Համաշխարհային պատմություն 8	«Զանգակ-97» ՍՊԸ	6,300,000
Հասարակագիտություն 8	«Զանգակ-97» ՍՊԸ	6,300,000
Հասարակագիտություն 8	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամը	6,200,000
Նախնական զինվորական պատրաստություն 8	«Աստղիկ գրատուն» ՍՊԸ	6,300,000
10-րդ դասարան		
Նախնական զինվորական պատրաստություն 10	«Աստղիկ գրատուն» ՍՊԸ	6,300,000
Համաշխարհային պատմություն 10	«Զանգակ-97» ՍՊԸ	6,300,000

Հանձնաժողովը ձայների 5/հինգ/ կողմ 0/զրո/ դեմ հարաբերակցությամբ որոշեց՝ Սահմանված կարգով լրամշակված դասագրքերը հանրակրթական ուսումնական հաստատությունում գործածության երաշխավորելու համար ներկայացնել նախարարի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արաքսիա Սվաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ Թամարա Սարգսյան

Ստալ Սարդարյան

Թամարա Գյոզալյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզան Սաֆարյան